

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 28/1

ք.Երևան

25 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշման դեմ փաստաբան Արմեն Օհանյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Փաստաբան Արմեն Օհանյանի կողմից դիմում-բողոք է բերվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշման դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը բերել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձը:

Քննարկվող դեպքում դիմում-բողոքը վերաբերվում է «Արտդետալ» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 18.03.2018թ. N367349/08 որոշմանը, սակայն դիմում-բողոքը բերվել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձի՝ փաստաբան Արմեն Օհանյանի կողմից: Մասնավորապես, դիմում-բողոքին կից ներկայացված չէ փաստաբան Արմեն Օհանյանը «Արտդետալ» ՍՊԸ-ի տնօրենի ներկայացուցիչը հանդիսանալու մասին ապացույցը (լիազորագիրը):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Փաստաբան Արմեն Օհանյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել: Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ

